ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/14

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերություն
Մասնակից՝ «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, պոմպերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 09.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 01.03.2021թ. www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պայմանագիր կնքելու մասին որոշմամբ արձանագրել մասնակիցների կողմից ներկայացրած գինը (պայմանագրի կատարման ընդհանուր գինը):

3. Արգելել «էջմիածին» ջրօգտագործողների ընկերությանը ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր՝ միավորի գնով:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 04.03.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 05.03.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/3296-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 09.03.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

09.03.2021թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 համարի ծածկագիրը:

17.03.2021թ.-ին, 25.03.2021թ.-ին և 08.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.04.2021թ.-ին:

2. **<u>«Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ն 09.03.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կարիքների համար՝ պոմպերի, տրանսֆորմատորի և մալուխի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգով պահանջվել են հետևյալ աշխատանքները:

Չափաբաժինների համարները	**Չափաբաժնի անվանումը**
1	ԷՅԿ 12-160-100 պոպմի վերանորոգում
2	ԷՅԿ 12-160-65 պոպմի վերանորոգում
3	ԷՅԿ 12-255-35 պոպմի վերանորոգում

Հրավերին կից հավելվածով՝ ծավալաթերթով, սահմանվել է, որ 1-ին չափաբաժնով պահանջվելու է 4 պոպմի վերանորոգում, 2-րդ չափաբաժնի մասով՝ 8 պոպմի վերանորոգում, 3-րդ չափաբաժնի մասով՝ 7 պոպմի վերանորոգում:

Հրավերով սահմանվել է, որ գնային առաջարկով առաջարկվում է պայմանգիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով:

«Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ի կողմից «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացրել է գնային առաջարկ (կցվում է), որով առաջարկել է պայմանգիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով՝

1-ին չափաբաժին՝ 3 463 200 ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժին ՝6 491 280 ՀՀ դրամ,

3-րդ չափաբաժին՝5 353 530 ՀՀ դրամ:

«ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ-ն «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացրել է գնային առաջարկ (կցվում է), որով առաջարկել է պայմանգիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով՝

1-ին չափաբաժին՝ 578 643 ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժին՝ 542 013 ՀՀ դրամ,

3-րդ չափաբաժին՝ 472 083 ՀՀ դրամ:

«ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ն «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացրել է գնային առաջարկ (կցվում է), որով առաջարկել է պայմանգիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով՝

1-ին չափաբաժին՝ 1 159 506 ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժին՝ 1 017 870 ՀՀ դրամ,

3-րդ չափաբաժին՝ 849 150 ՀՀ դրամ:

Հայտերը բացելուց հետո պարզվել է, որ «ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ն և «ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ-ն գնային առաջարկը ներկայացրել են միավորի գնով՝ մեկ պոմպի վերանորոգման համար:

Այնուհետև, Ընթացակարգի բոլոր մասնակիցները հրավիրվել են միաժամանակյա բանակցությունների, որի ժամանակ մասնակիցների կողմից, այդ թվում նաև «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ի կողմից կատարվել են գների նվազեցումներ:

www.gnumner.am պաշտոնական կայքում հրապարակված չեն «ԷՁ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունները, ինչպես նաև բանակցություններին նվիրված արձանագրությունը:

www.gnumner.am պաշտոնական կայքում 01.03.2021թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությամբ (կցվում է) սահմանվել է հետևյալը.

«Չափաբաժին 1

Գնման առարկա է հանդիսանում՝ ԷՅԿ 12-160-100 պոպմի վերանորոգում

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել “X”/	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/	Անհամապատասխանության համառոտ նկարագրություն
1	«ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ	X		
2	«Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ	X		
3	«ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ	X		
4	«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ	X		
5	«Անդրանիկ Գասպարյան» ԱՁ	X		

Մասնակցի զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել “X”/	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ /
1	«ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ	X	315000
2	«Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ		319000
3	«ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ		456000
4	«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ		457320

5	«Անդրանիկ Գասպարյան» ԱՁ		865000

Չափաբաժին 2

Գնման առարկա է հանդիսանում՝ ԷՅՎ 12-160-65 պոպմի վերանորոգում

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել “Հ”/	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել “Հ”/	Անհամապատասխանության համառոտ նկարագրություն
1	«ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ	Հ		
2	«Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ	Հ		
3	«ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ	Հ		
4	«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ	Հ		
5	«Անդրանիկ Գասպարյան» ԱՁ	Հ		

Մասնակցի զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել “Հ”/	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ /
1	«ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ	Հ	280000
2	«Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ		282000
3	«ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ		420000
4	«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ		422910
5	«Անդրանիկ Գասպարյան» ԱՁ		811410

Չափաբաժին 3

Գնման առարկա է հանդիսանում՝ ԷՅՎ 12-255-35 պոպմի վերանորոգում

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել “Հ”/	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել “Հ”/	Անհամապատասխանության համառոտ նկարագրություն
1	«Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ	Հ		
2	«ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ	Հ		
3	«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ	Հ		
4	«Անդրանիկ Գասպարյան» ԱՁ	Հ		
5	«ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ	Հ		

Մասնակցի զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել “X”/	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ/
1	«Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ	X	200000
2	«ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ		270000
3	«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ		377400
4	«Անդրանիկ Գասպարյան» ԱՁ		764790
5	«ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ		849150

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ նվազագույն գնային առաջարկ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշավ մինչև 5-րդ օրացուցային օր ներառյալ ընկած ժամանակահատվածը:»

Ա) «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.–ի թիվ 526–Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ պայմանագրի գինը կայուն է, եթե պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում, ապրանքները մատակարարվում և ծառայությունները մատուցվում են մինչև երեք տարվա ընթացքում: Եթե հրավերում և պայմանագրում նշված չէ, որ պայմանագրի գինը գործոնային է, ապա պայմանագրի գինը համարվում է կայուն՝ անկախ պայմանագրի կատարման ժամկետից:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Հրավերի 5.3 կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Ինչպես արդեն նշել ենք, տվյալ Ընթացակարգով պայմանագրի գինը եղել է կայուն, Հրավերով պահանջվել է գնային առաջարկը ներկայացնել պայմանագրի ԸՆԴՀԱՆՈՒՐ գնով, իսկ Հրավերին կից հավելվածով սահմանվել են վերանորոգման պոմպերի քանակները՝ գնային առաջարկում համապատասխան հաշվարկը կատարելու և պայմանագրի ընդհանուր գինը ներկայացնելու համար:

Հայտերի բացելուց հետո պարզվել է, որ տվյալ ընթացակարգի 2 մասնակից՝ «ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ն և «ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ-ն, գնային առաջարկը ներկայացրել են միավորի գնով՝ մեկ պոմպի վերանորոգման համար:

Հայտերը բացելուց հետո «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ն մատնանշել է գնահատող հանձնաժողովին, որ նշված ՍՊԸ-ների կողմից ներկայացվել են միավորի գներ, և նման դեպքում վերոհիշյալ ՍՊԸ-ները պարտավոր են ողջ պայմանագիրը՝ պոմպերի համապատասխան քանակներով, կատարել նշված միավորի գնով: Վերոհիշյալին ի պատասխան՝ գնահատող հանձնաժողովը հայտնել է, որ պայմանագիրը կնքելու է նոմինալ՝ միավորի գնով, իսկ այնուհետև համապատասխան քանակի պոմպերի վերանորոգման պատվերի դեպքում կվճարի յուրաքանչյուր պոմպի համար նախատեսված միավորի գինը:

Նշվածի դեմ «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ն առարկել է և հայտնել, որ պայմանագիրը կնքվում է ընդհանուր գնով, այլ ոչ թե միավորի գնով, որը չի կարող է բազմապատկվել համապատասխան պատվերների քանակով:

«Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ն գնահատող հանձնաժողովին հայտնել է, որ սպասում է համապատասխան արձանագրություններին, որպեզի ներկայացնի բողոք:

Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն կարևոր հանգամանքի վրա, որ տվյալ ընթացակարգով ոչ մի արձանագրություն այդպես էլ չի հրապարակվել www.gnumner.am կայքում (կարծես թե, միտումնավոր):

Այնուհետև ծանոթանալով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությանը, «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ն հայտնաբերել է, որ իր և ընդհանուր գին ներկայացրած մյուս ՍՊԸ-ների վերջնական, բանակցությունների արդյունքում նվազեցված գները և որոշմամբ ամրագրված գները չեն համապատասխանում միմյանց:

Մասնավորապես, նշված մասնակիցների ներկայացրած ընդհանուր գները գնահատող հանձնաժողովի կողմից կամայականորեն բաժանվել են պոմպերի պահանջված

քանակի վրա՝ համապատասխանաբար 4, 8, 7, ստացվել են միավորի գներ, և նշված միավորի գները արտացոլվել են պայմանագիր կնքելու որոշման մեջ:

Այլ կերպ ասած, ընդհանուր գին ներկայացրած մասնակիցների գինը և պայմանագիր կնքելու մասին որոշմամբ ամրագրված գները չեն համապատասխանում միմյանց:

Վերոհիշյալը «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ի մոտ հիմնավորել է այն կասկածը, որ գնահատող հանձնաժողովը փորձում է միավորի գին ներկայացրած ՍՊԸ-ների հետ պայմանագիրը կնքել միավորի գնով՝ համապատասխանաբար պատվերի դեպքում բազմապատկելով միավորի գինը համապատասխան պատվերների քանակի:

Մինչդեռ գնային առաջարկից ակհայտ է, որ գնային առաջարկը ներկայացվել է պայմանագրի ԸՆԴՀԱՆՈՒՐ գնով:

Գտնում ենք, որ նման բովանդակության պայմանագիր կնքելու որոշում կայացնելիս, այսինքն ներկայացրած գնային առաջարկները փոփոխելով՝ գնահատող հանձնաժողովը դրսևորել է կամայականություն և թույլ տվել գնումների մասին ՀՀ օրենսդրության վկայակոչված պահանջների կոպիտ խախտումներ:

Բ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն ՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Այսպիսով հաշվի առնելով վերգրյալը և հիմք ընդունելով www.gnumner.am համացանցային կայքի ուսումնասիրությունը, ցանկանում ենք փաստել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է նաև Օրենքի վերոհիշյալ դրույթները, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում և կարգով չի հրապարակվել Ընթացակարգի վերաբերյալ որևէ արձանագրություն:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 01.03.2021թ. www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պայմանագիր կնքելու մասին որոշմամբ արձանագրել մասնակիցների կողմից ներկայացրած գինը (պայմանագրի կատարման ընդհանուր գինը):

3. Արգելել «էջմիածին» ջրօգտագործողների ընկերությանը ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր՝ միավորի գնով:

Ընկերությունը 17.03.2021թ.-ին ներկայացրած լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 ծածկագրով բողոքը, որի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումներ և լրացուցիչ բողոքի պահանջ.

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կարիքների համար՝ հայտարարվել է «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ:

Տվյալ Ընթացակարգի մի շարք չափաբաժիններին մասնակցության հայտ է ներկայացրել «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ն:

Հարկ ենք համարում նշել, որ «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ն ս.թ. մարտի 4-ին գնահատող հանձնաժողովին է ներկայացրել դիմում, որով խնդրել է գնահատող հանձնաժողովից՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով՝ խնդրում եմ անհապաղ տրամադրել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հետևյալ փաստաթղթերը՝ բոլոր մասնակիցների հայտի փաթեթները, եթե առկա է նաև շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթեր՝ նաև այդ փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի բոլոր արձանագրությունները:

Հայտնում ենք, որ մինչ օրս Ա/Ձ-ին չի տրամադրվել պահանջված փաստաթղթերը, մինչդեռ համաձայն՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի՝ գնահատող հանձնաժողովը պարտավոր էր անհապաղ տրամադրել պահանջվող փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ տրամադրել գնման ընթացակարգի բոլոր

մասնակիցների հայտի փաթեթները, եթե առկա է նաև շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթեր՝ նաև այդ փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի բոլոր արձանագրությունները:

Ընկերությունը 23.03.2021թ.-ին ներկայացրած մեկ այլ լրացմամբ հավելել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 ծածկագրով բողոքը, որի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումները և բողոքի նոր պահանջները, և միևնույն ժամանակ խնդրում ենք քննարկման առարկա չդարձնել նախկինում ներկայացրած պահանջները:

Ուսումնասիրելով «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի կողմից թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 ծածկագրով բողոքի շրջանակներում ներկայացված ըւացման արդյունքում Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, ն մասնավորապես, 16.02.2021թ. հրավիրված միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ կազմված թիվ 4 արձանագրությունը, հայտնում ենք հետևյալը

1. Թիվ 4 արձանագրության 1-ին կետի համաձայն արձանագրվել է, որ մասնակցի կողմից բանակցության արդյունքում «ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 315.000 ՀՀ դրամ գնային առաջարկ - 378.000 ՀՀ դրամ ներապալ ԱԱՀ, մինչդեռ «ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ» ՍՊԸ-ն չի հանդիսանում ԱԱՀ վճարող /գնային առաջարկը կցվում է/:

2. Նույն թիվ 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ն իբր թե բանակցությունների փուլում առաջարկել է նոր գնային առաջարկ 865.000 ՀՀ դրամ, մինչդեռ Ա/Ձ-ի ներկայացուցիչները գների նվազեցման շուրջ բանակցություններին ապահովել են միայն իրենց ֆիզիկական ներկայությունը և որնէ գնային առաջարկով ներկայացրած գին չեն փոփոխել:

Բացի այդ, բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ գների շուրջ միաժամանակյա բանակցությունների ընթացքում գնահաաող հանձնաժողովի պահանջով բանակցությունների հիմքում դրվել է միավորի գինը, այսինքն մեկ պոմպի վերանորոգման գինը: Մասնավորապես, այն մասնակիցները, որոնք գնային առաջարկները ներկայացրել էին պայմանագրի ընդհանուր գնով, օրինակ միաժամանակ 4 պոմպի վերանորոգման ընդնահուր գին, գնահատող հանձնաժողովը այդ գինը բաժանել է 4 պոմպի քանակի և ստիպել է բանակցությունները վարել մեկ պոմպի գնի շուրջ: Նման դեպքում անհասկանալի է, թե արդյունքում պայմանագիրը ինչ գնով պետք է կնքվեր, եթե գնումների մասին ՀՀ օրենսդրությունը և տվյալ ընթացակարգի հրավերը սահմանում է պահանջ, որ գնային

առաջարկը ներկայացվում է պայմանագրի ընդհանուր գնով: Տվյալ դեպքում տվյալ պահանջների համաձայն հաղթող մասնակցի հետ պայմանագիրը պետք է կնքվեր մասնակիցների կողմից ներկայացված (կամ մասնակիցների կողմից բանակցությունների արդյունքում նվազեցված) գնային առաջարկով դիտարկելով ներկայացված գնային առաջարկը որպես պայմանագրի ընդհանուր գին, մինչդեռ բողոքաբերի մոտ տպավորություն է ստեղծվել, որ գնահատող հանձնաժողովը պատրաստվում է ներկայացված գնային առաջարկները դիտարկել որպես միավորի գին, կամայականորեն դրանք բազմապատկել տեխնիկական բնութագրում նշված պոմպերի քանակի վրա, այս եղանակով ստանալ պայմանագրի ընդհանուր գին և արդեն այդ գնով կնքել պայմանագիրը հաղթող մասնակցի հետ: Սակայն գնումների մասին օրենսդրությունը նման հնարավորությունը բացառում է, և Ընթացակարգի հրավերի 5.3 կետով հստակ սահմանում է, որ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է (իսկ տվյալ դեպքում պայմանգրի գինը կայուն է, այլ ոչ թե գործոնային), ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, և որևէ բաժանում կամ բազմապատկում արգելվում է:

Արդյունքում արձանագրում հևք, որ «էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կարիքների համար հայտարարված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի կողմից գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցություններին չեն պահպանվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, որը բացի թիվ 4 արձանագրությամբ արձանագրված որոշումներից, կարելի է փաստել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովից պահանջելով նաև գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների նիստի ձայնագրությունը:»:

Վերոգրյալների հիման վրա, «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրել է բողոքի փոփոխված և վերջնական պահանջը և խնդրել է՝,

1. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 01.03.2021թ. www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 16.02.2021թ. հրավիրված միաժամանակյա բանակցությունների արդյունքում նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները:

3. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին բանակցությունների արդյունքում նվազեցված գնային առաջարկները դիտարկել որպես պայմանագրի ընդհանուր գին:

4. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընթացակարգով հաղթող մասնակցի(ների) հետ պայմանագիրը կնքել մասնակցի(ների) առաջարկված գնային առաջարկի հիման վրա ներկայացված գնային առաջարկը դիտարկելով որպես պայմանագրի ընդհանուր, այլ ոչ թե միավորի գին:

26.03.2021թ.-ին ներկայացված բողոքի թիվ 3 լրացմամբ, Մասնակիցը Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 ծածկագրով բողոքը, որի հիմքերի վերաբերյալ ներկայացվում է հետևյալ յղացուցիչ նկաաառումը:

Ինչպես պարզ դարձավ Պատվիրատուի կողմից ներկայացված արձանագրությունների ուսումնասիրությունից «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2021թ. հայտերի բացման և գնահատման արձանագրությունում, ինչպես նաև որևէ այլ արձանագրությամբ գնահատող հանձնաժողովի կողմից չի արձագրվել, ամրագրվել գնման նախահաշվային գինը:

Նշվածի պայմաններում անհասկանալի է, թե բանակցությունների ժամանակ մասնակիցները գները նվազեցնելով, ինչ կողմնորոշիչ թիվ պետք է նկատի ունենային, եթե վերոհիշյալի վերաբերյալ տեղեկություններ հրապարակված չէին:

Նշված ևս մեկ անգամ ապացուցում է, որ անհրաժեշտ է, որպեսզի չեղարկվեն բանակցությունների արդյունքները, իսկ «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը տվյալ Ընթացակարգով բանակցությունների կազմակերպի և անցկացնի գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին կրկին խնդրում ենք բավարարել «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 ծածկագրով բողոքը:»:

3. <u>«Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 09.03.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/3355-2021 գրությամբ դիմել է «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի կողմից 09.03.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 11.03.2021թ.-ին թիվ 01-03/92-21 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 09 մարտի 2021թ. Ձեր գրության՝ «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ, հայտնում եմ, որ 2021թ. փետրվարի 1-ին «էջմիածին ջրօգտագործողների ընկերության» (այսուհետ՝ Ընկերություն) կողմից պոմպերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, գնանշման հարցման ձևով, կազմակերպվել է «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգ՝ երեք չափաբաժիններով:

Հրավերին կից ներկայացված թերությունների ակտով հստակ սահմանված է եղել Ընկերության հաշվեկշռում առկա յուրաքանչյուր տեսակի պոմպերի ընդհանուր քանակները, և նշված են եղել յուրաքանչյուր հնարավոր դետալների և մասերի փոխարինումը մեկ պոմպի համար, իսկ մասնակիցների կողմից գնային առաջարկները պետք է ներկայացվեին յուրաքանչյուր պոմպի սահմանված հնարավոր դետալների և մասերի փոխարինման համար, այլ մեր կարծիքով յուրաքանչյուր տեսակի ընդհանուր պոմպերի դետալների և մասերի համար: Նման պահանջ սահմանվել է ելնելով այն հանգամանքից, որ Ընկերությունը հստակ չէր կարող սահմանել, թե տարվա ընթացքում որ պոպմի որ հնարավոր դետալը կամ մասը կորող էր խափանվել և փոխարինվել, այսինքն գնման առարկայի նպատակը հստակ է սահմանված եղել, իսկ հաղթող մասնակցի(ների) հետ պայմանագիրը կնքվելու է բյուջեով սահմանված առավելագույն թվով, որպեսզի սահմանված ժամկետում ըստ Ընկերության կողմից ներկայացված պատվերների իրականացվի յուրաքանչյուր մասի կամ դետալի փոխարինումը նորով (ինչպես օրինակ

կազմակերպվում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման գնման ընթացակարգերը):

Միաժամանակ հայտնում ենք, որ բողոք ներկայացրած մասնակից «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ն (այսուհետ՝ Մասնակից) փոփոխել է հրավերին կից ներկայացված թերությունների ակտով սահմանված ձևաչափը, ընդհանուր գին սյունակաում ավելացրել է տվյալ չափաբաժնի պոմպերի ընդհանուր քանակը և ներկայացրել է գնային առաջարկը ընդհանուր պոմպերի հնարավոր բոլոր մասերի և դետալների փոխարինման համար, սակայն հաշվի առնելով որ ընթացակարգը կազմակերպված է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, որի համաձայն հայտ ներկայացրած բոլոր մասնակիցները միաժամանակ հրավիրվելու էին գների նվազեցման շուրջ վարվող բանակցություններին Մասնակցի կողմից ներկայացված հայտը չի մերժվել:

Միաժամանակ կարծում ենք, որ գնումներ անցկացնող կազմակերպությունը տիրապետում է ՀՀ գնումների մասին օրենքին և վերը նշված գործընթացը իրականացվել է՝ չշրջանցելով ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջները:»:

Պատվիրատուն 16.03.2021թ.-ին թիվ 01-03/99-21 գրությամբ ներկայացրել է «էջմիածին» ջրօգտագործողների ընկերության» կողմից պոմպերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների և մասնակիցների կողմից ներկայացված հայտերի լուսապատճենները:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից պոմպերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 01.02.2021թ.-ին հայտարարվել է «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.02.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ՝ ԱԱՀ/ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 **«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետ**	
	ԷՅՎ 12-160-100 պոմպի վերանորոգում	
«ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ	578643	578643
«ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ	966255	1159506
«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ	1829280	2195136
«Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ	3356640	3356640
«Անդրանիկ Գասպարյան» ԱՁ	3463200	3463200

Մասնակցի անվանումը	Առուսջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	Առաջարկված գին Ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 2 ***«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետ***	
	ԷՅՎ 12-160-65 պոմպի վերանորոգում	
«ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ	542013	542013
«ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ	848225	1017870
«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ	3383280	4059936
«Ռազմիկ Հովհաննիպան» ԱՁ	6304800	6304800
«Անդրանիկ Գասպար|ւսն» ԱՁ	6491280	6491280

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց՝ ԱԱՀ/ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ՝ ԱԱՀ/ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 3 ***«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետ***	
	ԷՅՎ 12-255-35 պոմպի վերանորոգում	
«ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ	472083	472083
«ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ	707625	849150
«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ	2641800	3170160
«Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ	5190360	5190360
«Անդրանիկ Գասպար|ւսն» ԱՁ	5353530	5353530

iii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ էջմիածին ջրօգտագործողների ընկերության կողմից կազմակերպված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մոտ չկան անճշտություններ, որոշել է հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին հրավիրել գների

նվազեցման շուրջ վարվող միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա 2021թ. փետրվարի 16-ին ժամը 10:00-ին: Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2021թ.-ի փետրվարի 16-ին ժամը 10:00-ին Հայաստան, Արմավիրի մարզ, Վաղարշապատ (էջմիածին) Զվարթնոց թաղամաս («Զվարթնոց» հյուրանոցային համալիրի հարևանությամբ) (էջմիածնի տարածաշրջան):

iv. Հանձնաժողովի 16.02.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ ***1 ԷՅՎ 12-160-100 պոմպի վերանորոգում***			
	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս			
	Հայտով ներկայացված գնային առաջարկ		***Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկ***	
	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	***Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ***	***Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ***	***Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ***
«ԷԷԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ	578 643	578 643	315 000	378 000
«ԲԱՅԱԶԷՆԵՐԳՈՇԻՆ»ՍՊԸ	966 255	1 159 506	456 000	547 200
«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ	1 829 280	2 1951 36	457 320	548 784
«Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ	3 356 640	3 356 640	319 000	319 000
«Անդրանիկ Ռասպլմրյան» ԱՁ	3 463 200	3 463 200	865 000	865 000

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ ***2 ԷՅՎ 12-160-65 պոմպի վերանորոգում***			
	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս			
	Հայտով ներկայացված գնային առաջարկ		***Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկ***	
	Առաջարկված գինը/առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	***Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ***	***Առաջարկված գինը/առանց ԱԱՀ/ՀՀ դրամ***	***Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ***
«ԷԷԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ	542 013	542 013	280 000	336 000
«ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ	848 225	1 017 870	420 000	504 000
«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ	3 383 280	4 059 936	422 910	507 492
«Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ	6 304 800	6 304 800	282 000	282 000
«Անդրանիկ Գասպարյան» ԱՁ	6 491 280	6 491 280	811 410	811 410

Մասնակցի անվանումը	***ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱԲԸ՝ 3 ԷՅՎ 12-255-35 պոմպի կերանորոգում***	
	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս	
	Հայտով ներկայացված գնային առաջարկ	***Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկ***

	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	*Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ*	*Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ*	*Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ*
«ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ	472 083	472 083	270 000	324 000
«ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ	707 625	849 150	849 150	1 018 980
«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ	2 641 800	3 170 160	377 400	452 880
«Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ	5 190 360	5 190 360	200 000	200 000
«Անդրանիկ Գասպարյան» ԱՁ	5 353 530	5 353 530	764 790	764 790

v. Նույն արձանագրության համաձայն՝ «էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից կազմակերպված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ-ն, 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվել «Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ-ն: Հանձնաժողովը որոշել է սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին առաջարկել կնքել համապատասխան պայմանագրեր:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի կողմից 09.03.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը

ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն

ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման

վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Կարգի 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Նույն կետի 23-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, հրավերով սահմանվում է նաև ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը, իսկ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով այդ առավելագույն գների հանրագումարը՝ նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

1) ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է,

2) ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է,

3) ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է,

4) Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է,

5) Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

«Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից պոմպերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 01.02.2021թ.-ին հայտարարված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) համաձայն՝ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:

Հրավերի 5.1-րդ և 5.2-րդ կետերի համաձայն՝ առաջարկվող գինը աշխատանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով: Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը

տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման: (…)

Նույն հրավերի 5.3-րդ կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Հրավերի հավելված 2-ով՝ «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման հրավերի գնային առաջարկով (այսուհետ նաև՝ Հավելված 2) սահմանվել է, որ մասնակիցը պետք է պայմանագիրը կատարելու համար ներկայացնի ընդհանուր գինը՝ տառերով և թվերով:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտակա-նությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնման առարկայի բնութագրի հաստատումն է: Հրավերով նախատեսվում է նաև, որ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, հրավերով սահմանվում է ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը, իսկ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով այդ առավելագույն գների հանրագումարը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից պոմպերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 01.02.2021թ.-ին հայտարարված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 5.3-րդ կետով սահմանվել է, որ գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, իսկ արդեն Հրավերի հավելված 2-ով՝ «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով

գնանշման հարցման հրավերի գնային առաջարկով, սահմանվել է, որ մասնակիցը պետք է պայմանագիրը կատարելու համար ներկայացնի ընդհանուր գինը՝ տառերով և թվերով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված և համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ, տվյալ դեպքում, Հրավերով Պատվիրատուն չի սահմանել, որ մասնակիցները գնային առաջարկով պետք է ներկայացնեն միավորի գներ: Ավելին, Հրավերի ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այն չի պարունակում Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետով սահմանված իրավակարգավորումը, այն է՝ հրավերով սահմանվում է նաև ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը, իսկ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով այդ առավելագույն գների հանրագումարը՝ նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

1) ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է,

2) ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է,

3) ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է,

4) Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է,

5) Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Վերոնշյալ դրույթի՝ Հրավերում առկայության պայմաններում միայն հնարավոր կլիներ փաստել, որ պայմանագիրը պետք է կնքվի առավելագույն գումարով, ինչպես իր դիրքորոշմամբ հայտնել է Պատվիրատուն:

Ուստի այն դեպքերում, երբ Հրավերում առկա չէ Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետ ենթակետով սահմանված իրավակարգավորումը, ապա հաղթող ճանաչված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու դեպքում, այն պետք կնքվի վերջինիս առաջարկած ընդհանուր գումարով:

Անդրադառնալով, հանձնաժողովի այլ գործողությունների ու անգործության վերաբերյալ բողոքով ներկայացված իրավական ու փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ

գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակվում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից պոմպերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 01.02.2021թ.-ին հայտարարված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսված չլինելու հիմքով:

Հանձնաժողովը, հայտերի բացման նիստում չհրապարակելով և չարձանագրելով գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գինը, որոշել է ծանուցել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին՝ առաջարկված գնի նվազեցման շուրջ բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված և համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ, տվյալ դեպքում, «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (նիստը նախագահողը), հայտերի բացման նիստում չհրապարակելով և չարձանագրելով գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գինը, ապա հրավիրելով և վարելով բանակցություններ, խախտել է Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթները, որի արդյունքում խախտվել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջները, քանի որ բանակցություններին ներկա գտնված մասնակիցները օբյեկտիվորեն զրկվել են գնման հայտով սահմանված նախահաշվային գներն իմանալուց:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Պատվիրատուի կողմից սույն բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձին չներկայացվեց որևէ վերաբերելի կամ թույլատրելի ապացույց, առ այն, որ բանակցությունները սկսելուց առաջ ներկա մասնակիցներն իրազեկվել են նախահաշվային՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գների մասին:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Սույն դեպքում, որպես որոշակի ապացույց, Պատվիրատուի կողմից չներկայացվեց գնահատող հանձնաժողովի նիստերի տեսաձայնագրությունները կամ ձայնագրությունները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ինչպես նաև ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերն ու ներկայացված բողոքի փաստական և իրավական հիմքերը, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 26-րդ կետի 5-րդ և 40-րդ կետի 1-ին ենթակետերով սահմանված դրույթները, որի արդյունքում խախտվել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի կողմից 09.03.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը և 16.02.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումները:
2. բանակցությունների արդյունքում նվազեցված գնային առաջարկները դիտարկել որպես պայմանագրի ընդհանուր գին, իսկ պայմանագիր կնքելու դեպքում ներկայացված գնային առաջարկը դիտարկել որպես պայմանագրի ընդհանուր գումար:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**